

Թիւ 21684  
Մարտ 21, 1969

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Համբարձում Հայց. Եկեղեցւոյ  
Եւ Ստիւգան Ժիսկան Խորհուրդի  
Պրիճֆորթ.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք 17 Մարտ 1969 թուակիր Ձեր նամակը, որով կը յայտնէիք  
թէ Ձեր Ժիսկան Խորհուրդի նորրնախիր անդամներու վաւերացման պաշտօնա-  
զրրին մէջ մոռցուած էր Յարութիւն (Հէրրի) Մակագեանի անունը:

Մեր ուշադրութենէն վրիպած ըլլալով Տիար Յարութիւն (Հէրրի) Մա-  
կագեանի անունը, այսու կը վաւերացնենք անոր ընտրութիւնը իբրեւ ան-  
դամ Ժիսկան Խորհուրդիդ, մէկ տարուայ պաշտօնավարութեան համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԸՆԳԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ



The Holy Ascension Armenian Church

ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1241 Barnum Avenue, Bridgeport, Conn. 06610 Tel. 333-8475



Pastor  
Rev. Fr. Guregh Kalfayan

Մարտ 17, 1969

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք, Նիւ Եորք. 10015

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ստացած ենք Մարտ 11, 1969 թուակիր նամակը, որով կը հաղորդէք մեզի վաւերացումը մեր Միական Խորհուրդի անդամներուն ընտրութիւնը:

Սրբազան Հայր, մեր Մարտ 5 1969 թուակիր նամակով հաղորդած էինք Միական Խորհուրդի դադարեալ անդամներուն ընտրութիւնը, եւ թուած էինք անունները: Միական Խորհուրդի դադարեալ անդամները չորս էին, եւ եղաւ չորսին համար ընտրութիւն:

Սրբազան Հայր, Ձեր Սրբազնութիւնը վաւերացուցած էր երեք անդամները, Տիարք, Էտուրտ Ճեվարճեան, Յակոբ Խաչատուրեան եւ Թամ Ալթունեան, իսկ չի էիք վաւերացուցալ Տիար Յարութիւն "Հէրրի" Մակազեանին անունը:

Սրբազան Հայր, կը յուսանք եւ կը խնդրենք Ձեր Սրբազնութենէն որ, նկատի կառնէք այս անձին ընտրութիւնը եւ կը պատասխանէք դրականօրէն:

Կանխապաշտ շնորհակալութեամբ:

Մատչիմ Զեթիկ Սրբազնութեան  
Ս. Աշոյն

*Yeghertz Hay Guregh Kalfayan*  
Կիւրեղ Զհնյ. Գալօսայեան Հովիւ,  
Ս. Համբարձում Հայց. Եկեղեցւոյ: